



## ԱՂԱՎԵԼԻ ՄԵԾՐՈՊՑԱՆ

### ԵՐԵՎԱՆԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԽՈՐՎԻՐԱԿ

(Տպագորություններ)

Ծաղատիկ և շրջանային գյուղերու գյուղատնտես բարեկամուհին հետ, 1952 թվականի օգոստոսի 15-ի կիրակի առավոտուն, ճամրա ելանք դեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ՝ Խորվիրապի երեսնի կայաւաննեն սկսալ մեր ինքնաշարժը ուղիղ գիծի մը պահանջանք կապի Արտաշատ տանոտ կրարածիկ ասֆալտապատ ծառուղիները, ճամրուն երփու եզերքներուն խոխոչացող առողջերու ետքը փոված էին Արտաշատի կողանտեսային ղաշտերու անսահման տարածությունները, որոնք կտարածվեին մինչև Արաքսի ափերը:

Մինչև Արտաշատ ճանապարհը կանցնի Շենգավիթ, Նոր-Խարերդ, Բաղրամյան, Դալար, Աղամզարու և Թուրաստան գյուղերուն ընդմեջն: Ճանապարհի երկայնքին տարրեր գեղեցկություններ կպարզվեին մեր աշխրուն:

Երբ Արտաշատ հասանք, գյուղատնտես բարեկամուհին ծանոթեցրուն մոտ քիչ մը հանդուցանք և հյուրասիրվեցանք:

Արտաշատը շրջապատված է կոլտնտեսային անծայրածիր կանաչագեղ դաշտերով: Հորիզոնին՝ վեհորեն կանգնած է դարավոր Մասիսը: Արտաշատը և իր շրջանային գյուղերը անվանի են իրենց բարգավաճ գյուղատնտեսությամբ: անոնց «միլիոնատեր» հրոշակած կոլտնտեսությունները ապահոված են կոլտնտեսականներու ունկոր կյանքը: Ամեն կոլտնտեսական ունի իր առանձին բնակարանը, իր տնամերձ խաղողի այգին և տնտեսությունը: Հանրահայտ են Արտաշատի բազմատեսակ խաղողները, գինին, օղին: Անոր բարեկամի, ցորենի և բանջարեղենի բնտիր բերքը կդնահատվի մեր Սովե-

տական լայնատարած երկրի շուկաներուն մեջ: Տեղի կոլտնտեսականներուն մաս կկազմեն Իրանին, Հունաստանին, Բաղդադին, Ֆրանսիային, Ամերիկային հայրենադարձ հարյուրավոր ընտանիքներ, որոնք կապրին ազատ ու երշանիկ հայրենի հողի վրա:

Արտաշատի մեր մեկժամյա այցեն վերջ շարունակեցինք մեր ճամրան դեպի Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը:

Երբ հասանք Դվինի շրջանի Այգեստան գյուղը, մեր ինքնաշարժը կանգնեցավ զգործացող առվակի մը եզերքին, ուր կգտնվեր բարեկամուհին աշխատանքային գրասենյակը:

Դվինի շրջանի մշակված դաշտային տարածություններուն մեջտեղ կանգնած է Ալգեստան գյուղը իր պտղառատ պարտեզներուն ծածած ու ծաղկած գեղեցիկ պատկերով: Դեպի երկինք պացող նորածիյ բարդիներով կցերված ուղիներուն ետև, քով-քովի շարված են հայրենադարձ կոլտնտեսականներու նորակերտ տունները կարմրուկ տանիքներով: Այս տուններն յուրաքանչյուրն ունի իր խաղողի այգին և տնամերձ հողամասը:


Այգեստանի դպրոցներու հայոց լեզվի հրականության երիտասարդ ուսուցչունցի Հայկանդուխտի հետ այցելեցինք գյուղի երկու նորակառուց դպրոցները (յոթնամյա և տասնամյա միջնակարդ) և այլ հասարակական շենքերը: Ցերեկին ճաշի հրավիրվեցանք 1947 թվականին Հունաստանին Հաւրենիք վերադարձած Բրուսացի Հովակիմ Թելյանի և իր քեռարի՝ Խաչիկ Փիլիպոսիանի բնակարանը: Ուրախ, բախտավոր մարդիկ: Հովակիմը հսկա կարասնեռով «իսարձի գինի» հանած էր: Թելյանի և Փիլիպոսյանից տունը շրջապատված էր ընդարձակ այգիներով:

Տեսա իրենց ձմեռալին պաշարի մառանները, յուղի, պանիրի կարասները, ցորենի խոշոր ամբարները, շորցուցած պտուղներն ու բանջարեղենները Ցերեկվա ժամը 3-ին մեկնեցանք Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը:

Մեր ինքնաշարժը ճամբաներեն կուրարթոշունի արագությամբ: Արտաշատ, Շիրազու, Նոր-Կյանք գլուխերու կոլտնտեսական դաշտերը փովեր էին մեր նայվածքի առջև: Մասիսի փեշերուն սպիտակ երիզի մը պես կերպարեր հայրենի Արաքսը:

Լուսավորիչ Եկեղեցին մուտքին: Խաղաղ հայրենի համայնապատկերը իր խորհրդավորությամբ համակեց զիս:

Վաղ դպրոցական օրերես ինձ սիրելի Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապի ուսմագնացության երազիս տեսանելի և շոշափելի իրականության առջև կգտնվելի: Հավատացյալ հոգվուս ամբողջ շերմեռանդությամբ համբուրցի կամարակապ մուտքի պատերուն մեջ փորված խաչերը: Կյանքի գերիվեր երշանկությունը պարուեց հոգիս: Կամարա-



Խորվիրապի Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին

Վեդի գյուղի կանաչագեղ դաշտերեն հետո, մտանք լերկ ու քարքարոտ տափաստանալին տարածության մը մեջ: Մի քանի բոպե, և ապա կհասնեինք Խորվիրապի: Անդիմազրելի հուզումը պատեց զիս, երբ բարեկամուհիս ինձ ցուց տվավ բլուրին վրա կանգնած Ս. Գրիգոր Լուսավորչի հնադարյան տաճարը, ուր կգտնվի Խորվիրապը: Քրիստոնեական հավատքի հնչախիսի սրտառուշ պատկերներ եւ տեսա այդ քարքարոտ արածետներուն մեջ: Ուխտավորներու և հավատացյաներու խումբեր, հետիոտն կամ սայլակներով, կվերադառնային Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապեն, իրենց կիրակնօրյա ուսման:

Արդեն բլուրին գագաթին ենք՝ Ս. Գրիգոր

կապ մուտքեն քանի մը քայլի վրա, աջակողմը, կանգնած է կարմրորակ տուֆ քարի հասուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին իր հնադարյան վեհանիստ տեսքով: Անոր փոքր և հաստ փայտյա դուռը բաց էր և ներսը դեռ կվլալային ուսմագնությունը վառած մոմերը: Իր պարզության մեջ հոյակապ, որքան ապավորիչ էր Եկեղեցին: Երեկոյան ժամերգության պահն էր Քահանան, սուլոր խորանին առջև կանգնած, իրիկնապահի աղոթքները կմրմնչեր: Սունկի եմ իշեր ու սրտեռանդ կաղոթեմ իմ պապերու այս լոււազարդ սեղանի առաջ, այնպես, ինչպես աղոթեր են անոնք այս կամարներու տակ, որոնք իրենց մեջ կամփոփեն հայ քրիստո-

նեական դարու առաջին աղոթքներն ու փառաբանովը մասնաւությունները:

Ժամերգութենեն վերջ, Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին բակեն սկսած մեծ հետաքրքրությամբ դիտեցինք անոր սկզբնական դարերեն՝ հիշատակելի արտաքին անկուններեն սկսյալ մինչ օրվան ուստավորներուն մատաղաւերուն դեռ ծխացող օշախները:

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կանգնած է սալահատակ փոքր բակի մը մեջ, որ շրջապատված է աղյուսով և կիրով շաղախմած պարիսպով և հնադարյան շենքի ավերակներով: Կարմրորակ գեղեցիկ տեսքով, կաթողիկե գմբեթով եկեղեցին 9-րդ դարեն նորոգված ըլլալով կպահեր իր անվտանգ կառուցվածքը:

Եկեղեցի բակին մեջ, քանի մը քայլի վրա, մտանք հազիվ 9—10 քառակուսի մետր տարածություն ունեցող կամարած սրահ մը: Կունկն ու մոմբ սկցուցեր էին անոր ամեն կողմը: Փոքրիկ, քարակերտ խորան մը կար այնտեղ, որուն քով բացված էր Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապը:

Տարիներու երազիս երշանիկ իրականության առջև համրացած կանգնած էի Ս. Գրիգոր Լուսավորչի պատմական վիրապի եզերքին: Հուզումներ ողողեցին միտք ու հոգիս... Կրոնքի պատմության առաջին էջերը բացվեցան: Յօզ թվականը իր քրիստոնեական վառ պատկերներով շարժանկարի պես կանցներ աշքերու առջևնեան:

Հայացքի կառշած սևախորշ փոսին, կարծես կտեսնեի հայոց առաջին քրիստոնյաց Տրդատ թագավորը, Աշխեն թագուհին, լըքնաղ Խորովիդութարը: Ասպա նայվածքիս առջևնեն կտողանցեին կաթողիկոսները, եկեղեցականները, մատենագիրները, ամբողջ հայ հավատացյալ ժողովուրդը ուստի եկած: Իրոնք ինծի պես հավատքի գերագույն պաշտամունքը, այս փոսին քով երկրագագեր և համրուրեր էին անոր սուրբ անկյունները:

14 տարիներ այս անդնդախոր փոսին մեջ ապրող և աստվածային հրաշքով միայն ողջ

մնացող Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապի ներսի մասը տեսնելու փափազս ալ մասամբ կատարվեցավ: Մեր մեքենավար Վարդանը վեղիցի ըլլալուն, իր պատասեկական օրերեն իրեն քաջ ծանոթ էին Խորվիրապի անդընդամուր վար իշնող ուղիղ սանդուխները: Ան, մեկ ձեռքին բռնած գրապանի իր էլեկտրական լամպը, սկսավ վար իշնել սանդուխներն: Ես և բարեկամունիս, իրարու ձեռքն ուժով բռնած, կճետելինք Վարդանին: Շուտով ան աննկատելի դարձավ անդընդամուր փոսի խավարին մեջ, ուղղվելով զեպի ձախ: Թանի մը վայրկյան վերջ անմեջի բերավ 14 տարի սուզբին շոքած և ազոթած քարի արանքներեն բռն մը հող: Երբ մեծ հետաքրքրությամբ Վարդաննեն տեղեկություններ կքաղի Խորվիրապի վիճի մասին, ան կպատմեր հետեւյալը. «Հողե փոքրիկ հատակի մը վրա սեղանի նման քար մը կապագ քարը Ս. Գրիգոր Լուսավորչի աղոթատեղին հեամարվի: Մով փոսի բոլոր կողմերը ուխտավորներու մոմերով կլուսավորվին, իսկ Խորվիրապի սանդուխներուն համրանքը կորոնցոցի 40 ոտքեն վերջ»:

Ուշ երեկոյան ժամը 7-ն էր, երբ մենք բաժնը վեցանը Ս. Գրիգոր Լուսավորչի Խորվիրապին: Ես կրկին ու կրկին համբուկեցի վանքի պատերը, սրբավայրի ամեն կողմեցի պատերը հավաքեցի, աղոթեցի Խորվիրապին բոլյսեր հավաքեցի, աղոթեցի Խորվիրապին առջև: Ս. Գրիգոր Լուսավորչի բլուրեն երկար դիտեցինք հայրենի շքնաղագեղ բնությունը: Արեամուտի ծիրանագույն ճաճանչներուն տակ, Արարատյան դաշտավայրի անծայրածիր տարածությունը հեռավոր ծովերու պատրանքը կուտար: Եվ Մասիս լեռ՝ հայոց աշխարհի զարերու այդ վկան, իրիկնապահի իր մթնագույն, կանաչ ու կապտորակ փեշերը տարածեր էր արծաթափայլ Արաքսի վրա: Կյանքիս մեջ առաջին անգամը կղիտեի այսքան մոտիկն հայրենի Արաքսն ու Մասիսը:

Այդ օրը իմ կյանքի ամենաերշանիկ ու անմոռանալի օրերեն մեկը եղավ:

